

ւելքի մահմեդական երկրները գերազրգիւտ ազգայնական վիճակ են ներկայացնում՝ լեցուած թունաւոր ատելութեամբ դէպի արեւմտեան մեծ պետութիւնները՝ շահերի այդ մօտիկութիւնը կը դգացուի է՛լ աւելի պարզ: Մահմեդական աշխարհի այս կամ այն վերաբերումից է կախուած, յսոչոր չափով, բրիտանական վեհապետութեան կայունութիւնը Յրեւելքում, իսկ մահմեդական աշխարհի տարածադրութեան եւ ընթացքի համար հազարն նշանակութիւն ունի Ռուսաստանի վերաբերումը դէպի արեւելեան Ժողովուրդները, — Ռուսաստանի, որի սահմաններում են ազրում աւելի քան 30 միլիոն ազգային անկախութեան ձգտող մահմեդականներ:

Ուժեղ Ռուսաստանը կարող է առանձնապէս օգտակար լինել Անգլիայի համար՝ Արեւ-

ւելքում անդորրութիւն պահպանելու տեսակէտից: Այստեղից՝ ե՛ւ այն նոր մտմտութեանը, որ նկատուած են անգլիական պահպանողականների մէջ՝ Ռուսաստանի վերաբերմամբ:

Բայց ... այստեղ արդէն սկսում է գործօն քաղաքականութեան բնագաւառը, մինչդեռ մեր նպատակն էր միայն պատմական նիւթերի պրպտումը:

Այդ պատմական նիւթերը, առանց կասկածի որեւէ տեղ թողնելու, ասում են մեզ, որ ցարական Ռուսաստանը, ինչպէս հարիւր տարի առաջ, այնպէս եւ հարիւր տարի վերջը, իր արեւելեան քաղաքականութեան մէջ, խաբել է հայերին եւ հայերի դիակները վրայ հաստատել իր թափանցումն ու տիրապետութիւնը Առաջաւոր Ասիայում:



ՉԻԼՃԵԱՆ ԼՈՒՍԱՆԿԱՐՁԱՏՈՒՆ

Americanize yourself by acquiring
Noteworthy American habits!

HAVE YOUR PICTURE TAKEN —
THE UNIQUE AND THE EVERLASTING
GIFT — YOUR PHOTOGRAPH

1220 Lex. Ave. (82nd Street) N. Y.

Phone: Butterfield 5969

Հարստեկան և ընտանեկան լուսանկարներու մասնագէտ
ՀԱՅՅԵՐՈՒ ՄԱՍՆԱՒՈՐ ԱԺԱՆ ԳԻՆԵՐ